211.060.00001

# APOSTILLE

*(Convention de La Haye du 5 octobre 1961)*

1. *District of Columbia*
   *United States of America*
2. This public document has been signed by **MELODY P. JONES**
3. acting in the capacity of **NOTARY PUBLIC IN AND FOR THE DISTRICT OF COLUMBIA**
4. bears the seal/stamp of **MELODY P. JONES, NOTARY PUBLIC IN AND FOR THE DISTRICT OF COLUMBIA**

## CERTIFIED

5. at Washington, D. C
6. the **26TH** day of **JULY 2001**
7. by *Secretary of the District of Columbia*
8. No. 83214
9. Seal/Stamp

10 Signature

Beverly D. Rivers

Beverly D. Rivers

5a- P0134

# CHARTER OF
# AZATUTYUN RADIOKAYAN – THE BRANCH OF RFE/RL, INC., IN THE REPUBLIC OF ARMENIA

## 1 GENERAL PROVISIONS

1.1 Azatutyun Radiokayan - The Branch of RFE/RL, Inc., in the Republic of Armenia, Inc. (hereinafter referred to as the "Branch"), is a separate subdivision of RFE/RL, Inc. (hereinafter referred to as the "Corporation"), a private not-for-profit corporation, organized and existing as a legal entity under the laws of the State of Delaware in the United States of America.

1.2 The Branch was established by the Board of Directors of the Corporation on 23 July 2001 under Article 61 of the Civil Code of the Republic of Armenia.

1.3 The Branch is not a legal entity itself. It has property assigned by the Corporation and acts on the basis of this Charter.

1.4 The Branch enters agreements and effects other legal acts on behalf of the Corporation. Any rights or obligations arising from contracts or arrangements made by the Branch fall upon the Corporation.

1.5 The Branch does not carry out commercial activities.

1.6 In its activities, the Branch abides by the legislation of the Republic of Armenia, its founding documents, and the administration decisions and instructions of the Corporation, as well as this Charter.

1.7 The Branch shall have its own seal showing its name and status as that of the Branch of the Corporation.

## 2 NAME AND ADDRESS OF THE LEGAL ENTITY THAT ESTABLISHED THE BRANCH

2.1 The name of the legal entity is as follows: RFE/RL, Inc.

2.2 The address of the legal entity is as follows: 1201 Connecticut Avenue, N.W., Washington, D.C., U.S.A.

3 NAME AND ADDRESS OF THE BRANCH

3.1 The name of the Branch is as follows: Azatutyun Radiokayan - The Branch of RFE/RL, Inc., in the Republic of Armenia.

3.2 The address of the Branch is as follows: Apartment 6, Moskovyan Street 24, 375002 Yerevan, Armenia.

DURATION OF THE ACTIVITIES OF THE BRANCH

4.1 The Branch is established for an unlimited period of time.

PURPOSE AND POWERS OF THE BRANCH

5.1 The activities of the Branch in the course of its business shall include certain functions of the Corporation; it shall also function as the representative office of the Corporation.

5.2 The Branch is created to conduct in the territory of the Republic of Armenia certain activities that the Corporation conducts outside the Republic of Armenia, as such activities are described in the Certificate of Incorporation of the Corporation; namely, to engage in "independent, professionally competent, responsible broadcast journalism"; and, in addition, to render assistance within the Republic of Armenia in gathering and compiling news reports and features in written or audio format for forwarding to and dissemination by the Corporation's international broadcasting center in Prague, Czech Republic.

5.3 To achieve the above objectives, the Branch exercises the following powers:

5.3.1 maintenance of relations between the Corporation and its Armenian business associates;

5.3.2 providing the Corporation with information necessary for the normal operation of the Corporation;

5.3.3 protection of the interests of the Corporation and assistance in achieving the purposes and meeting the requirements of the Corporation;

5.3.4 concluding transactions, agreements, contracts, and any other actions within the limits of authority granted by the Corporation;

5.3.5 undertaking any other steps as may be necessary for the operation of the Branch, subject to the goals of establishment and scope of business of the Branch and applicable legislation.

6 MANAGEMENT AND ADMINISTRATION OF THE BRANCH

6.1 The day-to-day operation of the Branch shall be managed by the Director of the Branch, appointed by the Corporation. Subsequent to her/his initial appointment, the Director of the Branch is to be appointed and dismissed by the Director of the Armenian Service of the Corporation, who represents the Corporation's management, and to whom the Director of the Branch is directly accountable.

6.2 The Director of the Branch shall carry out her/his activities in accordance with the provisions of this Charter and a Power of Attorney issued on behalf of the Corporation. The Power of Attorney outlines the range of authorities entrusted to the Director of the Branch and other legal acts that s/he is empowered to carry out.

6.3 The Director of the Branch has the authority to represent the Corporation before all state, governmental, and private institutions, enterprises, and organizations of the Republic of Armenia to the exclusion of those bodies and (or) entities concerned with employment relations, taxation, the calculation of taxes and (or) collection of taxes (representation before which will be the responsibility of the Bureau Administrator); to represent the Corporation in the media and in public relations; and to carry out other functions within the limits of her/his authority as stated in the Power of Attorney. (Leases and employment contracts will be signed by the Corporation's Director of Administration and Director of Human Resources, respectively, not by the Director of the Branch.)

6.4 Financial matters will be managed by the Bureau Administrator of the Branch; administrative matters will be co-ordinated with the Branch's Director and with the Director of Bureau Administration of the Corporation, to whom the Bureau Administrator reports.

6.5 The Bureau Administrator of the Branch shall carry out her/his activities in accordance with the provisions of this Charter and a Power of Attorney issued on behalf of the Corporation. The Power of Attorney outlines the range of authorities entrusted to the Bureau Administrator and other legal acts that s/he is empowered to carry out.

6.6 The Bureau Administrator of the Branch has the authority to represent the Corporation before all state, governmental, and private institutions, enterprises, and organizations of the Republic of Armenia that concern or relate to employment relations, taxation or social fund payments, the calculation of taxes or social fund payments and (or) their collection and associated reporting requirements; to open and maintain accounts for the Branch with banks in the territory of the Republic of Armenia; and to carry out other functions within the limits of her/his authority as stated in the Power of Attorney.

## PROPERTY OF THE BRANCH

7.1 The property of the Branch shall consist of assets allocated and assigned by the Corporation to the Branch, and tangible and (or) intangible assets as may be purchased by the Branch and reflected on the balance sheet of the Corporation. Such property allocated and assigned to the Branch shall at all times remain the property of the Corporation.

## 8 FINANCIAL RECORDS AND REPORTING OF THE BRANCH

8.1 The Branch shall maintain financial, accounting, and other records and report its business and financial performance to the Corporation according to the accounting and reporting procedures, policies, and standards adopted by the Corporation.

8.2 The Branch shall only maintain an internal balance sheet to the extent required by the legislation of the Republic of Armenia. The Branch may keep its own dram (AMD) and foreign exchange accounts with banks in the Republic of Armenia.

8.3 The Branch shall maintain financial, accounting, and other records and report its business and financial performance to competent authorities in the Republic of Armenia to the extent required by the laws and (or) any other enactment of the Republic of Armenia concerning resident tax payers, tax agents, and employers (within the meanings of such terms used in the laws and (or) any other enactment of the Republic of Armenia) for the purposes of statutory tax and other reporting.

8.4 For the purpose of statutory tax and other reporting of the Branch under the applicable laws of the Republic of Armenia, the financial year of the Branch shall be the calendar year commencing on the first day of January and ending on the thirty-first day of December of the same year.

## CONTROL OF THE ACTIVITIES OF THE BRANCH

9.1 General control of the Branch's activities is exercised by the Director of the Armenian Service of the Corporation, representing the management of the Corporation. The Corporation shall take decisions on the goals, terms of activities, and liquidation of the Branch.

9.2 Control over the Branch's financial activities is to be carried out by officers of the Corporation, and also by authorized bodies of the Republic of Armenia within the limits of their competence in cases stipulated by the legislation of the Republic of Armenia.

9.3 The scope of the Corporation's powers with respect to controlling the operation of the Branch shall include:

9.3.1 the approval, amendment, and restatement of this Charter;

9.3.2 determination of the business guidelines and production targets for the Branch and approval of the Branch's performance reports;

9.3.3 determining the structure of the Branch;

9.3.4 the decision to close and liquidate the Branch, appoint a liquidation commission, and approve the liquidation balance sheet.

## 10 TERMINATION OF THE BRANCH'S ACTIVITIES

10.1 The activities of the Branch shall be terminated in compliance with the procedures provided by the legislation of the Republic of Armenia in cases of liquidation of the Corporation or by decision of the Corporation.

## 11 EFFECT OF THIS CHARTER

11.1 This Charter shall enter into force as of the date of the registration of such Charter with the competent authorities of the Republic of Armenia.

11.2 This Charter shall automatically cease to have effect in the event of termination of activities by the Corporation.

11.3 This Charter shall be effected in triplicate in the English and Armenian languages.

Approved by the Board of Directors:

______________________________
Thomas A. Dine, President, RFE/RL, Inc.,
on behalf of the Board of Directors

23 July 2001
______________________________
Date

*****************************************************************************************

CITY OF WASHINGTON )
DISTRICT OF COLUMBIA ) ss:

I, Melody Jones, a Notary Public, hereby certify that on the 23rd day of July, 2001, Thomas A. Dine personally appeared before me being by me first duly sworn, declared that he signed the foregoing Charter, and that the statements therein contained are true.

______________________________
Notary Public

**MELODY P. JONES**
**NOTARY PUBLIC DISTRICT OF COLUMBIA**
**My Commission Expires June 30, 2006**

*Թարգմանված է անգլերենից հայերեն*

*Կոլումբիայի դիստրիկտ*
*(Խորհրդանիշ)*

# ԱՊՈՍՏԻԼ

*(Հաագայի 1961թ. հոկտեմբերի 5-ի կոնվենցիա)*

1. *Կոլումբիայի դիստրիկտ*
   *Ամերիկայի Միացյալ Նահանգներ*

2. Սույն հասարակական փաստաթուղթը ստորագրվել է ՍԵԼՈԴԻ Պ. ՋՈՆՍԻ կողմից,

3. որը հանդիսանում է ԿՈԼՈՒՄԲԻԱՅԻ ԴԻՍՏՐԻԿՏԻ (ՈՒՄ) ՊԵՏԱԿԱՆ ՆՈՏԱՐ,

4. կրում է հետևյալ մշագրմամբ կնիքը՝ ԿՈԼՈՒՄԲԻԱՅԻ ԴԻՍՏՐԻԿՏԻ(ՈՒՄ) ՊԵՏԱԿԱՆ ՆՈՏԱՐ ՍԵԼՈԴԻ Պ. ՋՈՆՍ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

5. Վաշինգտոն Դ. Ս.-ում

6. 2001 թ. ՀՈՒԼԻՍԻ 26 -ին

7. *Կոլումբիայի դիստրիկտի Քարտուղարի* կողմից

8. թիվ 83214

9. Կնիք՝

*/Կնիք/*

*/Ստորագրություն/*

Բեննի Դ. Հիվերս

*ՌԵԴԻՈ ՖՐԻ ՅՈՒՐՈՓ*
*(խորհրդանիշ)*
*ՌԵԴԻՈ ԼԻԲԵՐԹԻ*

# ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՌԱԴԻՈԿԱՅԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌՖԵ/ՌԼ, ԻՆԿ.-Ի ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ազատություն Ռադիոկայան – Հայաստանի Հանրապետությունում ՌՖԵ/ՌԼ, Ինկ.-ի մասնաճյուղը (այսուհետև տեքստում` «Մասնաճյուղ») ԱՄՆ-ի Դելավեր Նահանգի օրենսդրության համապատասխան հիմնադրված և գործող մասնավոր, շահույթ չհետապնդող, իրավաբանական անձ հանդիսացող ՌՖԵ/ՌԼ, Ինկ.-ի (այսուհետև տեքստում` «Կորպորացիա») առանձնացված ստորաբաժանումն է:

1.2. Մասնաճյուղը հիմնադրվել է Կորպորացիայի Տնօրենների Խորհրդի կողմից` 2001թ. հուլիսի 23-ին` Հայաստանի Հանրապետության քաղաքացիական Օրենսգրքի 61 հոդվածի հիմքով:

1.3. Մասնաճյուղը իրավաբանական անձ չէ: Մասնաճյուղի գույքը նրան է հանձնվում Կորպորացիայի կողմից: Մասնաճյուղը գործում է սույն Կանոնադրության դրույթներին համապատասխան:

1.4. Մասնաճյուղը Կորպորացիայի անունից կնքում է պայմանագրեր և իրականացնում է իրավաբանական բնույթի այլ գործողություններ: Մասնաճյուղի կողմից կնքված պայմանագրերը և համաձայնությունները իրավունքներ ու պարտականություններ են առաջացնում Կորպորացիայի համար:

1.5. Մասնաճյուղը չի իրականացնում առևտրային գործունեություն:

1.6. Իր գործունեության ընթացքում Մասնաճյուղը գործում է Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի, իր հիմնադիր փաստաթղթերի և Կորպորացիայի որոշումների ու ցուցումների, ինչպես նաև սույն Կանոնադրության հիման վրա:

1.7. Մասնաճյուղը ունի իր սեփական կնիքը, որի վրա զետեղվում է նրա անվանումը և կարգավիճակը՝ որպես Կորպորացիայի Մասնաճյուղ:

## 2. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ և ՀԱՍՑԵՆ

2.1. Մասնաճյուղի հիմնադիր իրավաբանական անձի անվանումն է՝ ՌՖԵ/ՌԼ, Ինկ.:

2.2. Մասնաճյուղի հիմնադիր իրավաբանական անձի հասցեն հետևյալն է՝ 1201 Կոննեկտիկուտ Ավենյու Ն. Վ., Վաշինգտոն Դ.Ս., ԱՄՆ:

## 3. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՆՎԱՆՈՒՄՆ ՈՒ ՀԱՍՑԵՆ

3.1. Մասնաճյուղի անվանումն է՝ Ազատություն Ռադիոկայան – Հայաստանի Հանրապետությունում ՌՖԵ/ՌԼ, Ինկ.-ի Մասնաճյուղ:

3.2. Մասնաճյուղի գտնվելու վայրի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 375002, Մոսկովյան փող. 24, բն 6:

## 4. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

4.1. Մասնաճյուղի գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

## 5. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Մասնաճյուղի գործունեությունը ընդգրկում է Կորպորացիայի որոշակի ֆունկցիաները ինչպես նաև ներկայացուցչական ֆունկցիան:

5.2. Մասնաճյուղը ստեղծվում է Հայաստանի Հանրապետության տարածքում որոշակի գործունեություն իրականացնելու նպատակով, որը Կորպորացիան իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս. և որը նշված է Կորպորացիայի Գրանցման Վկայականում՝ մասնավորապես, այն մասնակցում է «անկախ, պրոֆեսիոնալ տեսակետից մրցունակ, պատասխանատու լրատվության հեռարձակում» ծրագրին և ի հավելումն դրա՝ աջակցում է Հայաստանի Հանրապետությունում գրավոր կամ ձայնային ֆորմատով լրատվական տեղեկատվության ու ակնարկների հավաքմանը՝ Չեխիայի Հանրապետության Պրագա քաղաքում գտնվող՝ Կորպորացիայի միջազգային հեռարձակման կենտրոն ուղարկելու և վերջինիս կողմից դրանք տարածելու նպատակով:

5.3. Վերոնշյալ նպատակներն իրագործելու համար, Մասնաճյուղը իրականացնում է հետևյալ իրավասությունները՝

5.3.1. Կորպորացիայի և նրա Հայաստանյան գործընկերների միջև կապերի պահպանում,

5.3.2. Կորպորացիային բնականոն գործունեության համար անհրաժեշտ ինֆորմացիայի տրամադրում,
5.3.3. Կորպորացիայի շահերի պաշտպանություն և աջակցություն Կորպորացիային՝ նրա նպատակներին հասնելում և պահանջները պահպանելում,
5.3.4. Գործարքների, պայմանագրերի, համաձայնագրերի կնքում և ցանկացած այլ գործողությունների իրականացում, որոնց իրավունքը տրվել է Կորպորացիայի կողմից,
5.3.5. Մասնաճյուղի գործունեության համար անհրաժեշտ այլ բայլերի իրականացում, որոնք անհրաժեշտ են Մասնաճյուղի նպատակներին հասնելու համար, կամ պահանջվում են օրենսդրությամբ,

## 6. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6.1. Մասնաճյուղի առօրյա գործունեությունը ղեկավարվում է Մասնաճյուղի Տնօրենի կողմից, որը նշանակվում է Կորպորացիայի կողմից: Սկզբնական նշանակումից հետո Մասնաճյուղի Տնօրենը նշանակվում և ազատվում է Կորպորացիայի Հայկական Ծառայության Տնօրենի կողմից, որը ներկայացնում է Կորպորացիայի կառավարչությունը, և Մասնաճյուղի Տնօրենը անմիջականորեն հաշվետու է նրան:

6.2. Մասնաճյուղի Տնօրենը գործում է սույն Կանոնադրության և Կորպորացիայի կողմից տրված Լիազորագրին համապատասխան: Լիազորագրով նշում են Մասնաճյուղի Տնօրենին տրված լիազորությունների սահմանները, ինչպես նաև այն իրավաբանական գործողությունները, որոնք նա լիազորված է կատարելու:

6.3. Մասնաճյուղը Տնօրենը լիազորվում է ներկայացնելու Կորպորացիան Հայաստանի Հանրապետության բոլոր պետական, կառավարական և մասնավոր հաստատությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների առջև, բացառությամբ այն մարմինների և անձերի, որոնք կապված են աշխատանքային հարաբերությունների, հարկային կամ սոցիալական վճարների և/կամ նրանց հավաքման ու դրա հետ կապված պահանջվող հաշվետվությունների ներկայացման հետ (այս մարմինների առջև ներկայացուցչության իրականացման իրավասությունը պատկանում է Բյուրոյի Ադմինիստրատորին), ներկայացնելու Կորպորացիան մամուլում և հասարակական կապերի ընթացքում, իրեն տրված Լիազորագրի սահմաններում իրականացնելու այլ ֆունկցիաներ: (Վարձակալության և աշխատանքային պայմանագրերը ստորագրվում են համապատասխանաբար Կորպորացիայի Ադմինիստրացիայի Տնօրենի և Մարդկային Ռեսուրսների Տնօրենի կողմից, այլ ոչ թե Մասնաճյուղի Տնօրենի կողմից):

6.4. Ֆինանսական հարցերը կարգավորվում են Մասնաճյուղի Բյուրոյի Ադմինիստրատորի կողմից. ադմինիստրատիվ հարցերի կարգավորումը կատարվում է Մասնաճյուղի Տնօրենի և Կորպորացիայի Բյուրոյի Ադմինիստրացիայի Տնօրենի հետ, որոնց Մասնաճյուղի Բյուրոյի Ադմինիստրատորը հաշվետու է:

6.5. Մասնաճյուղի Բյուրոյի Ադմինիստրատորը իր գործունեությունը իրականացնում է սույն Կանոնադրության և Կորպորացիայի կողմից տրված Լիազորագրի հիման վրա: Լիազորագիրը սահմանում է Բյուրոյի Ադմինիստրատորի լիազորությունների սահմանները և այն իրավաբանական բնույթի գործողությունները, որոնք նա իրավունք ունի կատարել:

6.6. Մասնաճյուղի Բյուրոյի Ադմինիստրատորը իրավասու է ներկայացնելու Կորպորացիան Հայաստանի Հանրապետության բոլոր պետական, կառավարական և մասնավոր հաստատությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների առջև՝ աշխատանքային հարաբերությունների, հարկային կամ սոցիալական վճարների և/կամ նրանց հավաքման ու դրա հետ կապված պահանջվող հաշվետվությունների ներկայացման առնչությամբ, Հայաստանի Հանրապետության տարածքում Մասնաճյուղի համար բացելու և վարելու բանկային հաշիվներ, իրականացնելու այլ ֆունկցիաներ՝ Լիազորագրով սահմանված լիազորությունների շրջանակներում:

## 7. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՒՅՔԸ

7.1. Մասնաճյուղի գույքը բաղկացած է Կորպորացիայի կողմից Մասնաճյուղին հանձնված ակտիվներից և նրա կողմից ձեռք բերված նյութական կամ ոչ նյութական ակտիվներից, որոնք արտացոլվում են Կորպորացիայի հաշվեկշռում: Մասնաճյուղին հանձնված գույքը բոլոր ժամանակներում պետք է լինի Կորպորացիայի սեփականությունը:

## 8. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Մասնաճյուղը պետք է կատարի ֆինանսական, հաշվապահական և այլ գրանցումներ և իր տնտեսական ու ֆինանսական գործունեության մասին հաշվետու լինի Կորպորացիային՝ Կորպորացիայի կողմից ընդունված հաշվապահական և հաշվետվությունների ներկայացման կարգերի, քաղաքականության և ստանդարտներին համապատասխան:

8.2. Մասնաճյուղը ունի միայն ներքին հաշվեկշիռ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող ծավալով: Մասնաճյուղը կարող է ունենալ իր սեփական դրամային և արտարժութային հաշիվները Հայաստանի Հանրապետության բանկերում:

8.3. Մասնաճյուղը պետք է կատարի ֆինանսական, հաշվապահական և այլ գրանցումներ և ներկայացնի իր ֆինանսական և տնտեսական գործունեության մասին հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին, որքանով որ դրանք պահանջվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, որոնք վերաբերում են հարկատու ռեզիդենտներին, հարկային գործակալներին և աշխատողներին (այս տերմինները պետք է մեկնաբանվեն այնպես, ինչպես

նշված է օրենքներում և/կամ այլ իրավական ակտերում)՝ հարկային և այլ հաշվետվությունների ներկայացման նպատակներով:

8.4. Հայաստանի Հանրապետության գործող օրենքներով պահանջվող Մասնաճյուղի պարտադիր հարկային և այլ հաշվետվությունների ներկայացման նպատակով՝ Մասնաճյուղի ֆինանսական տարին համապատասխանում է օրացուցային տարվան, որը սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

## 9. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

9.1. Մասնաճյուղի ընդհանուր վերահսկումն իրականացվում է Կորպորացիայի Հայաստանյան Ծառայության Տնօրենի կողմից, որը ներկայացնում է Կորպորացիայի կառավարչությունը: Կորպորացիան որոշումներ է կայացնում Մասնաճյուղի նպատակների, գործունեության ժամկետների և լուծարման վերաբերյալ:

9.2. Մասնաճյուղը ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկումն իրականացվում է Կորպորացիայի պաշտոնյաների կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից, իրենց իրավասությունների սահմաններում:

9.3. Մասնաճյուղը գործունեության վերահսկման (ներառյալ կառավարման)՝ Կորպորացիայի իրավասությունների շրջանակները հետևյալներն են՝

- 9.3.1. Սույն Կանոնադրության հաստատումը, նրանում փոփոխություններ կատարելը և վերահաստատումը,
- 9.3.2. Մասնաճյուղը գործունեության սահմանների և նպատակների որոշումը և Մասնաճյուղի գործունեության արդյունքների հաստատումը,
- 9.3.3. Մասնաճյուղը կառուցվածքի սահմանումը,
- 9.3.4. Մասնաճյուղը փակման և լուծարման մասին որոշման կայացումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարային հաշվեկշռի հաստատումը:

## 10. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

10.1. Մասնաճյուղի գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Մասնաճյուղի լուծարման, կամ Կորպորացիայի կողմից համապատասխան որոշում ընդունվելու դեպքում:

## 11. ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

11.1. Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտնում այն Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններում գրանցման (հաշվառման) պահից:

11.2. Սույն Կանոնադրության գործողությունը ավտոմատ կերպով դադարում է Կորպորացիայի կողմից գործունեության դադարեցման պահից:

11.3. Սույն Կանոնադրությունը կազմված է երեք անգլերեն և հայերեն օրինակներից:

ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԱՆՈՒՆԻՑ

(ստորագրություն)
Թոմաս Ա. Դայն, Նախագահ
Ո-ՖԵ/Ո-Լ, Ինկ.
23 հուլիսի, 2001թ.

Քաղաք Վաշինգտոն
Կոլումբիայի Տարածաշրջան

Ես, պետական նոտար Մելոդի Ջոնս, սույնով հավաստում եմ, որ 2001թ-ի հուլիսի 23-ին Թոմաս Ա. Դայնը անձնապես ներկայացավ իմ մոտ, և իմ առջև բավարար կերպով հավաստեց և հայտարարեց, որ ինքը ստորագրել է այս Կանոնադրությունը, և որ նրանում նշված փաստերը ճշմարիտ են:

(ստորագրություն)
Պետական նոտար

Մելոդի Փ. Ջոնս
Կոլումբիայի Տարածաշրջանի Պետական Նոտար
Իմ հանձնարարականի ժամկետը լրանում է 2006թ.-ի Հունիսի 30-ին

(ԿՆԻՔ)

Թարգմանիչ` Փարադյան

1 4489

НАДПИСЬ О ЗАСВИ... ПОДЛИННОСТИ

20 . 08 . 2009

государственный нотариус

(подпись)